# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի և Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի միասնական խորհրդի նիստի

(Հերթական հեռավար նիստը կայացել է 2026 թվականի փետրվարի 26–ին):

Նիստին մասնակցում են խորհրդի 9-ը անդամներից 8-ը, բացակա՝ 1 (Կարեն Հակոբյան):

Նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում են Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի տնօրեն Ա. Սարգսյանը և գլխավոր հաշվապահ Ն. Ասլանյանը, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող Զ. Վարդանյանը և ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ Կ. Մուսաելյանը, Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի տնօրեն Ն. Մեհրաբյանը:

Օրակարգում՝

1.1 Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ I կիսամյակում կատարված աշխատանքների, այդ թվում՝ փոխտնօրենների, գրադարանավարի, հոգեբանի հաշվետվություն: /Զեկուցող՝ Զ. Վարդանյան/

**1.**2 Հաստատության բյուջեի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան հաշվետվություն: /Զեկուցող Կ. Մուսաելյան/

**2.**1 Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ I կիսամյակում կատարված աշխատանքների, այդ թվում՝ փոխտնօրենների, գրադարանավարի, հոգեբանի հաշվետվություն: /Զեկուցող՝ Ա.Սարգսյան/

**2.**2 Հաստատության բյուջեի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան հաշվետվություն: /Զեկուցող Ն. Ասլանյան/

**3.** Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ I կիսամյակում կատարված աշխատանքների, այդ թվում՝ փոխտնօրենների, գրադարանավարի, հոգեբանի հաշվետվություն: /Զեկուցող Ն. Մեհրաբյան/

Լսեցին՝ 1 (1. Պ. Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ I կիսամյակում կատարված աշխատանքների, այդ թվում՝ փոխտնօրենների, գրադարանավարի, հոգեբանի հաշվետվության մասին: /Զեկուցող՝ Զ. Վարդանյան/)

2. Հաստատության բյուջեի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան հաշվետվություն: /Զեկուցող Կ. Մուսաելյան/)

1. Զեկուցող Զ. Վարդանյանը նշեց այն մասին, որ պայմանավորված հաստատության տնօրենի արձակուրդում գտնվելու հանգամանքով իրենց հաստատության օրակարգի հարցերը կզեկուցի ինքը:

Զ.Վարդանյանը, բանավոր կարգով, ներկայացրեց Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ I կիսամյակում կատարված աշխատանքները, նշեց հաստատության նվագախմբի ելույթի մասին և բոլոր փաստաթղթերը տեղադրեց խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

2. Զեկուցող Կ. Մուսաելյանը ներկյացրեց Պ. Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության կատարողականը և բոլոր փաստաթղթերը տեղադրեց խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով «2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների» մասին մանկավարժական խորհրդի 2025թ. համապատասխան որոշումը և զեկուցողի ներկայացրած հաշվետվությունը, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանության արժանացնել ներկայացված հաշվետվությունները:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի, 7-րդ ենթակետի և/կամ 8-րդ ենթակետի պահանջներով, կառավարման խորհուրդը՝

2. Հավանության արժանացնել ներկայացրած, 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

Լսեցին՝ **3.** (3. Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ I կիսամյակում կատարված աշխատանքների, այդ թվում՝ փոխտնօրենների, գրադարանավարի, հոգեբանի հաշվետվության մասին: /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

4. Հաստատության բյուջեի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան հաշվետվություն: / Զեկուցող Ն. Ասլանյան/)

3. Զեկուցողը կառավարման խորհրդին ներկայացրեց բոլոր հաշվետվությունների մասին, նշեց այն մասին, որ բոլոր փաստաթղթերը տեղադրվել է խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով «2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների» մասին մանկավարժական խորհրդի համապատասխան որոշումը և Ա. Սարգսյանի ներկայացրած հաշվետվությունները, կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

3. Հավանության արժանացնել ներկայացված հաշվետվությունները:

Զեկուցող Ն. Ասլանյանը խորհրդի անդամներին ներկայացրեց Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը, նշեց որ այն ամենայն մանրամասնությամբ ու բացված տողերով տեղադրվել է խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի, 7-րդ ենթակետի և/կամ 8-րդ ենթակետի պահանջներով, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հավանության արժանացնել Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված հաստատության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը:

Լսեցին՝ 3

(Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսունադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի (պլանի) առաջին կիսամյակում կատարված աշխատանքների, այդ թվում՝ փոխտնօրենների, գրադանավարի, հոգեբանի հաշվետվությունների մասին (զեկուցող՝ Ն. Մեհրաբյան):

Զեկուցողը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց վերոնշյալ հաշվետվությունները նշեց դրանց կատարողականների մասին, ժամկետների պահպանման և շեղման մասին, ինչպես նաև բոլոր գերատեսչություններից ստացված հրահանգների կատարման մասին: Ն. Մեհրաբյանը հավելեց, որ վերոնշյալ բոլոր փաստաթղթերը տեղադրվել են խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Արտահայտվեցին.

1. Հաստատության խորհրդի անդամ Արմինե Ամիրյանը:

Նա նշեց այն մասին, որ իր կողմից ուսումնասիրվել են բոլոր հաշվետվությունները այդ թվում նաև գրադարանավարների հաշվետվությունները և առարկություններ չունի:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով «2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների» մասին մանկավարժական խորհրդի որոշումը և տնօրեն Ն. Մեհրաբյանի կողմից ներկայացված հաշվետվությունները, կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հավանության արժանացնել տնօրեն Ն. Մեհրաբյանի կողմից ներկայացված հաշվետվությունները: